



Բաժնեգին տարեկան. — Ֆրանսա եւ Սուրիա 10 ֆր. Պալատնեան երկիրներ 50 Սէնթ, արտասահման 60 Սէնթ
Administration et Rédaction, H. N. GHAZAROSSIAN, 7, Rue Papère — MARSEILLE (France)

Թիի 4

Է. ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ 1931

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՈՒԹԻՒՆԸ

Եթէ միայն այս կեանքին համար Քրիստոսի յուսացած ենք, մենք բոլոր մարդոցմէն աւելի խղճալի ենք: Բայց հիմա Քրիստոս մեռելներէն յարութիւն առած է, ննջեցեալներուն առաջին պատուը:

Ա. Կոր. ԺԵ. 19, 20

Յարութեան ջատագովական զլխին մէջ առաքեալը ցոյց կու տայ Յարութեան և Անոր յարութեան արժէքն ու տարածականութիւնը ո՛չ միայն Քրիստոսի անձին նկատուածով, այլ նաեւ ու մահաւանդ հաւատացեալներու ներկայ եւ ապագայ գոյութեան նկատուածներով:

Կորնթացիք շատ մասերով եւ շատերէ լսած էին Քրիստոսի յարութեան մասին, վասն զի յարութեան մեծ դէպքը ծածուկ անկեան մը մէջ տեղի ունեցած եւ հոն խեղդուած չէր, ընդհակառակը շատեր վկայ էին, Անոր գերեզմանին հակադ գինուորներէն սկսեալ մինչեւ փարիսեցիներն ու քահանաները եւ քահանայապետները: Բայց զիտէին նոյն կեփաս եւ ուրիշ առաքեալներ, որոնցմէ ոմանք ղեռ կ'ապրէին, որոնք վկայ էին թէ Քրիստոսը տեսան յարութենէն յետոյ, նոյնիսկ վերջին անգամն ըլլալով Պողոս ինքն ալ տեսած էր: Ասոնց վկայութեան հաւատալով Կորնթացիք Քրիստոսի դարձած եւ եկեղեցիին միացած էին: Կը հաւատային Անոր աստ-

ուածային ծննդեան, կը հաւատային Անոր փառաւոր այլակերպութեան, Անոր վարդապետութեան ու կեանքին, Անոր չարչարանացը, Անոր քաւչարար արեամբ մեղաց թողութեան, կը հաւատային նաեւ Անոր յարութեան: Բայց երբ խնդիրը մարդկային մահկանացու մարմինին յարութեանը եկած էր, հոգ սկսած էին ոմանք կաղալ, խորհելով թէ այդքան հաւատք թերեւս յանդգնութիւն, չափազանցութիւն է, մարդկային համեստութեան սահմանէն դուրս ելլել է: Այսպէս անոնք կերպ մը հաշմանդամութեան մասնուած էին եւ ուրիշներուն ալ սկարաւալուն պատճառ կ'ըլլային: Իսկ եկեղեցիին մէջ տեսակ մը պաղութիւն ու կայունութիւն երևան եկած էր կարծես եւ իրաւամբ: Ուստի առաքեալը նախապէս կ'ուզէ հաստատել թէ Յիսուս Քրիստոսի փրկագործութիւնը Իր մահամբ, որ այդքան մեծ տեղ զբաղած է իրենց մտքին մէջ, վասն զի անոր ի հետեւան անոնք խաղաղութիւն ունին Աստուծոյ եւ իրարու հետ, այդ փրկագործութիւնը սերտ յարաբերութիւն ունի Քրիստոսի յարութեան հետ եւ առանց անոր քրիստոնէական հաւատքի չէնքը փոշիացած ու ջուրն ինկած պիտի ըլլար. ու նաեւ թէ իրենց հաւատքը, թէ Պողոսի քարոզութիւնը եւ թէ բոլոր հաւատացեալներու փրկութեան խորհուրդը ան-

հիմն էր, «Վասն զի եթէ Քրիստոս յարութիւն առաւ չէ, ձեր հաւատքը պարապ է:

Արդ, Քրիստոսի յարութիւնը քրիստոնէական կեանքի ամենաէական վէմն է, որուն վրայ հաստատուած է քրիստոնէական եկեղեցին: Իսկ անոնց որ երկչոտութեամբ եւ պակաս հաւատքով կը մօտենան, մեռելոց յարութեան գաղափարին զանոնք կը քաջալերէ առաքեալը ըսելով, Քրիստոս յարութիւն առած է: Ու եթէ միայն մէկը մեռելներէն յարութիւն առած է, ուրեմն կայ մեռելոց յարութիւնը, ուստի դուք ալ յարութիւն պիտի առնէք: Ապա թէ ոչ ինչ պիտի ըլլար մեր յոյսը. մենք մեր քարոզութեամբ հովը միայն ծեծած պիտի ըլլայինք եւ Երուսաղէմէն սկսեալ մինչեւ Կորնթոս եւ Հռովմա բոլոր հաւատացեալները դատարկ առասպելներու հաւատացած պիտի ըլլային, եւ մենք ոչ միայն մարդիկ պիտի խաբէինք, հապա նաեւ Աստուծոյ սուտ վկաները՝ պիտի ըլլայինք, հաւատացնելով թէ Քրիստոս յարութիւն առած է: Արդ, եթէ Աստուծոյ Քրիստոսը յարուցած է, ու եթէ մենք Աստուծոյ ճշմարիտ վկաներն ենք, ուստի դուք ալ ոչ թէ արտօնութիւն, այլ իրաւունքն ունիք հաւատալու մեռելոց յարութեան: Ու մեռելոց յարութեան խորհուրդը ձեր մէջ սքանչելի յոյսը արթնցնելու է անդինական կեանքի մասին որ հեռուէն ձեզի կը ժպտի: «Ես եմ յարութիւնը եւ կեանքը, ան որ ինծի կը հաւատայ, թէ եւ մեռնի պիտի ապրի»:

Վասնզի եթէ մեր յարութեան եւ յաւիտենական կեանքի խորհուրդը չըլլայ եւ մենք այս անցաւոր քանի մը տարիներուն համար Քրիստոսի յուսացեր ենք, (Անկէ մեղքերու թողութիւն ընդունած ենք, Անով կը քալենք յաճախ իյնալով ու ելլելով, երբեմն յաղթելով ու յաղթուելով), այն ատեն մենք բոլոր մարդոցմէն աւելի խղճալի ենք, որոնք մեզի պէս չունին անձինս եսին իշխելու դժուարութիւնը, մեղքին դէմ մարտնչելու դժուար գործը: Զպիտի ունենայինք այն օրական զրկումները, զորոնք կամաւ ի գործ կը դնենք ու մեր մարմինները կը ճնշենք ու կը նուաճենք աւելի փառաւոր կեանքի մը հասնելու փափաքելով, գիտնալով թէ որքան որ աշխարհի ծանրութիւնները վերցնէինք մեր վրայէն ինքզինքնիս աւելի մօտ պիտի գգայինք մեր Տէրոջ: Վերջապէս չպիտի հանդուրժէինք այն զրկանքներուն ու տառապանաց, հալածանքներուն ու ծաղրանքներուն նշաւակ ըլլալու, եթէ գիտնայինք թէ աշխարհի քանի մը տարիներուն մէջ համըրւած են այս լուսոյ կեանքի օրերը:

Այն, եթէ այդպէս ըլլար, մենք աշխարհի բոլոր մարդոցմէն աւելի խղճալի պիտի ըլլայինք: Ուրեմն ուտենք ու խմենք, քանի որ առանց ապագայ յոյսի եղած կեանքին իրական նպատակին համաձայն ապրած պիտի ըլլայինք:

Բայց ո՛չ, Քրիստոս յարութիւն առած է. մահուան յաղթած է. կ'ապրի Անիկա եւ կեանքին ատկէ աւելի արժէք տուած է, եւ մեզ ալ ինչպէս իր կեանքին, նոյնպէս նաեւ իր յաղթութեան բաժնեկից ըրած է. ուրեմն մենք եւս յաղթականներ ենք իրմով: Արդ, մեր ներկայ եւ ապագայ կեանքին բանալին մեր ձեռքն է միմիայն իրմով. Յարուցեալ Քրիստոսով:

Իրմով է մեր մեղքերէն ազատումը:

Իրմով է հին կեանքին եւ աշխարհի յարաբերութեանց վախճանը:

Իրմով ամէն բաները նոր կ'ըլլայ մեր կեանքի բոլոր մարդերուն մէջ:

Իրմով ուժ եւ զօրութիւն ունինք աշխարհի եւ սատանային յաղթելու:

Իրմով մէկ ենք Աստուծոյ գաւակներուն հետ:

Իրմով ու միայն իր անունով է որ երկրի վրայ ինչ որ կապենք երկինքի մէջ կապուած պիտի ըլլայ, ու երկրի վրայ ինչ որ արձակենք երկինքի մէջ արձակուած պիտի ըլլայ:

Իրմով կ'առատանանք ամէն բանի մէջ, հաւատքի մէջ, ուրախութեան, հեղութեան, խոնարհութեան, հնազանդութեան, հաւատարմութեան, խաղաղութեան մէջ. սիրոյ, ծառայութեան, համբերութեան, երկայնամտութեան, ժողովալութեան մէջ: Մեր սիրտը լեցուն է Անով եւ Անոր հանդէպ զոհաբանութեամբ, ու մեր պատկերը երթալով Անոր պատկերին կը փոխուի փառաց ի փառս:

Իրմով ունինք խոստում՝ թէ ներկայ եւ թէ գալիք բաներու մէջ: Ներկայիս Աստուծոյ որդիներն ենք եւ մեզի ինչ որ պիտի պատահի այս աշխարհի մէջ չենք գիտեր, բայց գիտենք թէ երբ Անիկա յայտնուի Անոր պէս պիտի ըլլանք. Ուստի մենք եւս հաւատքի հօր Աբրահամի պէս մեր հոգեւոր աչքերը վեր բարձրացնենք ու դիտենք Քանանը ու պտղաւինք անոր մէջ, արեւելքէն արեւմուտք, հիւսիսէն հարաւ, վասնզի Անիկա մեզի տըւաւ: Այս խոստումը յաղթական կեանքն է որ կ'ըսկըսի հոս ու կը շարունակուի յաւիտենականութեան մէջ, ուր չկայ պարտութիւն, ցաւ, արցունք այլ միշտ ուրախութիւն, խաղաղութիւն խնդութիւն ու Սէ'ր Քրիստոսով ու Անոր մէջ:

Ու ես յարութեան օրուան այս խորհուրդներով առլի ներհայեցողական ակնարկ մը կը դարձնեմ իմ մէջս, կը բազմաթիւ այդ խոստումներն իմ անձիս հետ, ու հոն կը տեսնեմ միայն տկարութիւն, անյարմարութիւն, մեղաւորութիւն, դեռ հակումներ չարին ու մեղքին: Մարդկային աչքերով դիտելով կը գտնեմ հոն միայն յուսահատ եւ արգահատելի վիճակ մը, ... Բայց Քրիստոս յարութիւն առած է:

Ու իմ յուսահատ աչքերուս մէջ ալ յուսոյ նշոյլ մը կը ծագի, ինչպէս ծագեցաւ յարութեան առաւօ-

տը աշակերտաց սրտին մէջ, ու միտք» կը լուսա-
նորուի Քրիստոսի վերջին խօսքով, «Ամէն բան կա-
տարուեցաւ»: Այս, կատարուեցաւ իմ փրկութիւնս, իմ
կեանքիս ապահովութիւնը, իմ յաղթութիւնս աշխար-
հի, մեղքին ու մահուան վրայ, իմ յարութեանս
փառքը: Այլ կը մոռնա՞մ իմ տկարութիւններս, իմ
յողութիւններս, իմ արդարութեանս պատուած
հանդերձները, կը մոռնա՞մ ինքզինքս բոլորովին եւ
կը խորասուզուիմ Յարուցեալին համայնատարած
յաղթութեան մէջ, հոն ծածկուելու: Դիտե՛մ որ իմ
Փրկիչս կ'ապրի. ու երբ Ինքը յաղթական ձայնով
իւր վերջին հրամանն ընէ հրեշտակապետին փողը
հնչեցնելու, ես ալ պիտի ըլլամ անոնցմէ, որոնք ը-
սելով Իւր ձայնը մէկ ակնթարթի մէջ անապականա-
ցուցեալ փոխուելով, վեր պիտի բարձրանամ իմ
Փրկիչս քով ըլլալու յաւիտեանս:

Կ'օրհնեմ զԲեզ ով Յարուցեալդ, որ այս քաղցր
յոյսը բոլոր զքեզ սիրողներուն հետ իմ մէջս ալ
հաստատած ես:

ՀԱԿԱՊԱՏԿԵՐՆԵՐ

Հարուստ եւ անտարբեր, երբեմն ալ քրիստոն-
եաները ծաղրող մէկու մը յուզարկաւորութեան հան-
դէսը կը կատարուէր: Փողոցը լեցուն էր սեւազգ-
եաց անձերով, որոնք իրենց վերջին յարգանքը
կ'ուզէին կատարել հարուստին, զանիկա փառքով
Թաղելու համար:

Դիակին կառքը դանդաղօրէն կը յառաջանար
փողոցն ՚ի վար դէպի գերեզման, հազիւ թէ մար-
դիկ կը համարձակէին իրարու հետ խօսելու: Կար-
ծես կը վախճային ընկերէն լսել սա հարցումը,
«Ո՛ւր գնաց Դ...» —

Յուզարկաւորներու շարքը հազիւ մէկ երկու փողոց
անցաւ, մարդիկ տան մը երկրորդ յարկին բացուած
պատուհանէն հետեւեալ երգին ձայնը կը լսէին,

Երբ այս կեանքի փոքրանքներն լիքջանան,
Ու հասնիմ հոն, երկնային սուրբ քանան.
Սոսկ իմ Փրկիչս մօտ ըլլալս ինձ համար
Փառք մը կարժէ դարերու անհամար:

Հսողներուն սրտէն սարսուռ մը անցաւ. կարծես թէ
ամէն մարդ կայնիլ կ'ուզէր շունչ մը առնելու այդ
յուզարկաւորութեան հեղձուցիչ խորհուրդներէն ազա-
տելու բաղձանքով:

Բայց դիակը տանող կառքը կանգ չէր առներ, մար-
դիկ շարունակեցին իրենց քայլերը մինչեւ գերեզման
իրենց մեռելը Թաղելու:

Ի՞նչ մեծ տարբերութիւն կայ այն մարդոց մէջ,
որոնք Քրիստոսը իւր իրենց կեանքի յոյսն ունին եւ
ուրիշներու որոնք յոյս մըն ալ չունին:

Յարութեան առաւօտն է որ այս սքանչելի յոյ-
սը դրած է հաւատացեալներու մէջ:

ՄԵԾԱԳՈՅՆ ԱՐՇԱԼՈՅՍԸ

Կը դողդոջեն լոյսերն երկնից ակամայ,
Կը մարմինն աւտոյ ու լուսին արծաթեայ.
Դեռ երէկի քնն սեւ քողը ահաւոր
Որով ծածկեց արփին իւր դէմքն սգաւոր,
Ի տես մահուան Աստուածորդւոյն անմահին,
Խաչափայտէն կախուած անմեղ էակին.
Այն քացառիկ մեծ խաւարէն ցորէկուան
Կարծես դողան երկնից լոյսերը համայն:

Կը ծաւալի արշալոյսը յամրօրէն
Տակաւ խոյս տայ աղջամուղջը առջեւէն,
Կ'ոսկեզօծուին գագաթները լեռներուն.
Մէկվի վանէ լուռ բնութիւնն իւր խոր քուն.
Շնչէն մեղմ ի գեփիւռները կենսատու.
Եւ փայփայեն տերեւները ծառերու,
Լսուի դալլալն Թռչուններու քաղցրանուագ
Որ ներքողին ողջ բնութեան Հեղինակ:

★

★ ★

Խորհրդաւոր եւ հիասքանչ այս պահուն
Մինչ պահապանք գերեզմանին մշտարթուն
Հսկին խառն մարմինն վրայ Յիսուսին:
Բացուի յանկարծ դուռը կապոյտ երկինքին,
Վար իջնելով սուրբ հրեշտակներ լուսեղէն
Կը գլորեն հսկայ քարը դամբանէն,
Շնորհին տարերքն հսկայական ցնցումով,
Դիտին փռուին պահապաններն սոսկումով:

Գերիններու ազատարար մեծ Հոգին
Արդ միանայ իւր բաժնուած մարմինին,
Խունկ ու պատանք եւ ծալլուած վարշամակ
Որ պատէին Անոր մարմինն անապակ,
Հոն կը կենան որպէս վկայք անքարբառ
Հռչակելու այս մեծ դէպքը հրաշափառ:
Յո՞ւան երկնից լուսապայծառ հոգիներ
Եւ աշխարհի բոլոր Թշուառ հոգիներ:

Նոյն վեհ պահուն խաւար մը կանայք անձնուէր,
Մինչ իւղերով եւ խոնկելով ծանրաբեռ
Դան օժելու մարմինը Սուրբ Օծեալին
Թափուր գտնեն ներսը Անոր դամբանին:
Երբ զարմացած ու շուարած մեծապէս
Արցունք Թափեն հեկեկալով դառնապէս
Լսեն յանձամ մեծ աւետիսն ՚ի զուարթնոց
Որ գոցեն, «Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց»:

★

★ ★

Մահանուած Յարուցեալը յաղթական
Վերստանձնած այժմ իւր ուժերն գերբնական,
Նոյն ցորէկուան լոյսերը դեռ ջմարած.
Յայտնէ ինքզինքն աշակերտացն իւր լքուած,
Դարձնելով մեծ դէպքն յաւետ պատմական
Հէք մարդկութեան տայ գրաւական պատուական
Թէ մեր կեանքի վերջալոյսն այս անլոյս
Կը յաջորդէ սուրբ Յարութեան Արշալոյս:

(Վեր.) Մ. ՏԵՐ ՍՍՀԱԿԵԱՆ

ՕՐՀՆԵԱՆ, ԿԵԱՆՔԻՆ ՆԵՐԿԱՆ

Dr. F. B. Meyer

ԿԸ ԳՈՐԾԷ

Իմ Հայրս մի՛նչեւ, ցիմա կը գործէ, ես ալ կը գործեմ:
Յովն. Ե. 17

Աշխարհի մէջ մեծ գործիչը Աստուած է: Նա եօթներորդ օրը Իր հանգիստը մտաւ, բայց Իր հանգիստը գործերով լի եղած է: Ան հանգստեան մէջ կը գործէ եւ գործի մէջ կը հանգչի: Բնութեան գործողութիւնները, Նախախնամութեան ընթացքը, պատմութեան մէջ պարզուած որոշ ծրագրի մը հոլովոյթը, կենդանի նշանակներն են Իր անխնայ գործունէութեանց: «Ամէն բաները Անկէ եւ Անով եւ Անոր համար են, Իրեն փա՛ռք յաւիտեանս: Ամէն:

Պէտք է շատ զգոյշ ըլլանք որ Աստուծոյ այս անձնական գործունէութիւնը Հոգիներ Օրէնքի Իշխանութեան քողին տակ: Մարդիկ շատ կը խօսին օրէնքի (բնութեան օրինաց) վրայ զանոնք իբր ուժեր նկատելով, մինչ իրականին մէջ օրէնք մը անխտոր մեթոս մ'է որուն միջոցաւ օրէնքին ետին զտնուած խորհրդաւոր եւ անպատմելի ուժը կը գործէ: Լոկ օրէնքին վրայ խօսէ, եւ երբեք բան մը բացատրած չես ըլլար նոյն ինքն ուժին էութեան մասին: Իսկ եթէ հարցնես թէ, այդ ուժը ի՞նչ է, միայն մէկ պատասխան կայ որ բաւարար ըլլայ հարցման, այդ պատասխանը կը յայտնուի միտի, ամենապարփակ բառի մը մէջ. Աստուած:

Աստուծոյ գործատեղին տիեզերքն է, բայց նաեւ կրնաս գայն գտնել յանձնուած սրտի մը մէջ: Ասոր մէկ զեղեցիկ օրինակը կայ մեր Տէրոջը կեանքին մէջ: Երբ իր թշնամիները զինքը սխալի մէջ բռնել ուղեցին շաբաթ օրը՝ անգամաւոյժ մը բուժած ըլլալուն համար, Նա պատասխանեց, «Իմ Հայրս մինչեւ հիմա կը գործէ, ես ալ կը գործեմ»:

Այս խորիմաստ պատասխանը միշտ հասկցուած եւ զնահատուած չէ: Սովորական բացատրութիւնը պա է թէ, «Դիմութեան գործերը շաբաթը չեն լուծեր ինչպէս Աստուծոյ անդադար գործունէութիւնը Իր հանգիստը չի վրդովեր»: Բայց ասկէ աւելի խորունկ բան մ'ալ կայ: Հօրը թելադրութիւններն ու ներգործութիւնները կը շարժէին ու կը յուզէին մեր Փրկչին էութեան մէջ զինքն առաջնորդելով մինչեւ այդ բոլորին, այդ հրաշքին, եւ ուստի Ինք իբրեւ Պառայ եւ Որդի հնազանդելէ զատ ուրիշ բան մը չունէր ընելիք: Ուստի եթէ որեւիցէ յանցանք կենար, Իրը չէր ան, այլ Իր մէջ ներգործող կամքինը, որ զինքն առաջնորդած պիտի ըլլար այդ ասեղյարայց գործը ընելու:

Արդ, փոքրագոյն աստիճանի մը մէջ, բայց նոյն գիծերուն վրայ, Աստուած կը գործէ զինք սիրող եւ

հնազանդ սրտերուն մէջ: Այնպէս որ առաքեալը կըրնար ըսել, «Ահով ու զողով անձերնուդ փրկութիւնը գործեցէք, վասնզի Աստուած է որ ձեր մէջ կը ներգործէ կամենալը ու ընելը Իր հաճութեանը համար» Փիլ. Բ. 12, 13: Նոյն ճշմարտութիւնը ուրիշ տեղերու մէջ ալ ի յայտ կու գայ: «Իր ներգործութեանը համեմատ, որ գործութիւնով իմ մէջս ի գործ կը դրուի» Կող. Ա. 29: «Ձեր մէջ Իր առջեւ հաճոյ եղածը ընէ» Եբր. ԺԳ. 21:

Որպիսի՜ ծանրակշիռ խորհուրդներ կը յուզեն այս խօսքերը: Անդրադարձի՛ր ով իմ անձս, սքանչացի՛ր, յաւիտենական Աստուածը կը ծոխ, քու գոմի պէս անմաքուր, ամխանոցի նման մութ, խռնուած սենեակի մը պէս հեղձուցիչ, նեղ սահմաններու մէջ գործելու: Արդարեւ զարմանալի չէ՞ միթէ, որ Նա, զՈր երկինքներն չեն կրնար պարփակել եւ որոնք մաքուր չեն Իր աչքին, յանձն առած է ջանք թափել այսքան անխառնալից ենթակայի մը վրայ, յո՛յժ աններգաշնակ պարագաներու միջեւ . . . : Որքան զգոյշ ըլլալու ենք զինքը լաւ հիւրընկալելու, առանց որեւէ խոչ գրնելու Իր ճամբուն վրայ: Որպիսի՜ անձկութեամբ պարտինք մ'թերել Իր շնորհալի ներգործութեանց փոքրագոյն շարժումները, նման մեքենավարին որ կը պահպանէ իր մեքենային ուժը, կամ ոսկերիչին պէս որ ծայրայեղ ինսյոյողութեամբ կը ժողվէ ոսկիի իւրաքանչիւր փշրանքը: Անտարակոյս պիտի գիտակցինք սուրբ երկիւղածութեան մը վախին եւ ջերմ անձկութեան մը դողին՝ մինչ մեր առօրեայ կեանքին ու գործոց մէջ կը կատարենք այն բոլորը, որ կ'արտայայտեն Հօր Աստուծոյ մեր կատարած ներգործութիւնը:

Անշուշտ մէկ առումով մեր փրկութիւնը կատարեալ է: Բայց ուրիշ առումով մը զեռ յառաջացման մէջ «կը փրկուինք»: Երբ Յիսուս մեռաւ, փրկուեցանք մեղքի դատապարտութենէն եւ պատիժէն, բայց մեր մէջ ընակող մեղքէն հեղհեղեղ կը փրկուինք, Սբ. Հոգւոյն շնորհալի նորոգութեամբ: Գալով մարմնոյն ազատագրման խնդրոյն՝ զեռ պիտի փրկուինք երբ հրեշտակապետին փողը Յաբութեան նշանը տայ: Այս երկու կարեւոր կէտերուն մէջտեղն է որ կը զանենք եւ կ'սպասենք մեր մէջ ընակող մեղքէն լիովին ազատուիլ եւ Աստուծոյ Որդւոյն նմանութեան հասնիլ:

Այս գործին պաշտօնեան Աստուած է: Նա կը բնակի յանձնուած սրտին մէջ, Իր առջեւէն փտաբերով ինչ որ չարէն է, նման լոյսին՝ որուն անդրանիկ ճառագայթները ցրուցին տիեզերքի վրայ տիրող խաւարը: Բայց Անիկա այս գործը մեքենապէս, անդիմադրելի կերպով կամ երկաթեայ բիրա ուժով չէ որ կը կատարէ: Նա կը գործէ զրդելով, ներքին մղումներով, արգելքներով, թելադրութիւն-

ներով կամ ներշնչումներով, հպումներ՝ որոնք փետուրի պէս թեթեւ են, հրեշտակային մեղմութեամբ տրուած: Եթէ այս ներգործութիւնները անտեսենք, անոնք կարծես կ'ընկղմին, կ'անյայտանան, յայնժամ հոգին կը նմանի այն լքեալ փոսերուն որոնց մէջ երեւցած մեքենաներն ու այլազան բեկորները կը պատմեն թէ հոն աշխատողներու գործունեայ մակընթացութիւնը շատո՛նց տեղատուութեան ենթարկուած է: Եթէ ընդհակառակը, ուշադրութեամբ հնազանդինք, անոնք հետզհետէ կ'ուժեղնան, եւ մեր հնազանդութիւնը անոնց ազդեցութիւնը եւ արդիւնքները կը յաւերժացնէ մեր նկարագիրներուն մէջ: «Աստուածային թեւադրութեան մը հնազանդութիւնը, զայն տեւական շահու մը կը վերածէ»: Նոր ձեռագործ մէ, ոսկեղէն, արծաթեայ կամ թանկագին քարերէ կերտուած ըլլալը, հոգեւոր բնութեան գործարանին մէջ:

Սակայն եւ այնպէս կարեւոր խնդիր մը կայ զոր պէտք է խնամով ի միտ ունենալ: Եթէ միայն ուշ դնենք Սբ. Հոգւոյն ներքին մղումներուն ու թելադրութեանց, կրնանք շփոթիլ իր ձայնը ճանչնալու մէջ, վասն զի Սատանան մեզ նեղելու համար, պիտի կեղծէ զայն, լուսաւոր հրեշտակի կերպարանք առնելով: Ուստի պարտինք յիշել թէ Աստուած մարդկային հոգիները երեք ազդակներով կը դաստիարակէ: Խօսքով, Հոգիով ու Նախախնամական դիպուածներով: Այս երեքը երբեք զիրար չեն հակասեր, միշտ միաբան են: Հետեւաբար երբ մեր սրտերուն մէջ ի գործ դրուած գորեղ ներգործութեան մը կը գիտակցինք, պարտինք զայն նախ փորձել Աստուծոյ խօսքովը, ապա սպասել որ պարագաները պարզուին: Թէ որ միայն ներքին լոյսին հետեւէինք առանց Ս. Դրոց, երազատեսներ պիտի ըլլայինք. իսկ անգործնական պիտի ըլլայինք, եթէ լոկ ներքին լոյսին հետեւէինք առանց դէպքերու պարզուելուն սպասելու:

Թող մեր նախընտրելի գիրքը ըլլայ մեր բովանդակ էութիւնը յարաճուն կերպով բանալ Աստուծոյ ներգործութեան առջեւ: Սկիզբէն մենք իր ձեռագործն էինք բարի գործերու համար պատրաստուած: Եւ հիմա խնդրենք իրմէն որ մեր մէջ գործէ այն բարի գործոց «կամենալը», այնպէս որ մեր կամքը առանց իր ազատ գործունէութենէն բան մը կորսնցնելու, թափանցուած եւ կաղապարուած ըլլայ իր կամքովը, նման լոյսին որ կը ծաւալի մթնոլորտին մէջ, առանց զայն տեղափոխելու: Դարձեալ ակնկալենք թէ Նա մեզի բաւարար գործութիւն պիտի տայ, որ կարենանք իր կամքը «ընելու» ամէն բանի մէջ զինքը հաճեցնելով: Այսպէս օր ըստ օրէ մեր կեանքը, յայտնութիւնը պիտի ըլլայ այն սուրբ կամեցողութեանց եւ սիրոյ գործերուն՝ որոնք պիտի հաստատեն թէ Աստուած մեր մէջ կը ներգործէ:

ՊԵՏՐՈՍԻ ՆԱՅԵՅԱԿ

(ՂՈԻԿ. ԻԲ. 61)

Ո՞վ կարող է նկարագրել այդ ակնարկը: Յիսուսի անուշ աչքերուն մէջ վիշտի տիեզերք մը կը ցոլար: Թշնամիներ կարող էին անգութ հարուածներ իջեցնել Անոր սուրբ մարմինին, անամոթաբար թքնել Անոր շնորհալի դէմքին եւ ծաղրական դիտողութիւններ տեղալ Անոր աստուածային ականջներուն, սակայն անոնցմէ եւ ոչ մին կը դաչէր Անոր փափուկ սրտին ամենանուրբ թելերուն: Բայց զինք սիրող աշակերտին ուրացումը, երգումով ու անէծքով ուրացումը, կը թափանցէր Անոր գորովալի սրտին ամենէն խորերը ու կը խոցէր Անոր ամենանուրբ զգացումները: Ուրացուիլ անկէ, որմէ ջերմապէս կը սիրուէր ու կը պաշտուէր: Կա՞յ ասոր հաւասար վիշտ մը:

Սակայն Յիսուսի քաղցր աչքերուն մէջ՝ ուր վշտի ծով մը կը ծփար, կը նշմարուէր նաեւ մի ուրիշ գերբնական արտայայտութիւն: Ս էր, խորունկ սէ՛ր կը ցոլար անոնց անյատակ խորութեանց մէջ: Ինչպէս որ ալէկոծ ծովու մը ալիքները կարող չեն վրդովել անոր յատակը տիրող անգործութիւնը՝ նշմանապէս վշտի կոհակները կարող չէին տապալել այն սէրը որ Յիսուսի սրտէն կը բղխէր եւ Անոր բուն էութիւնը կը կազմէր: «Ես քեզի համար ազօթեցի» կ'ըսէին այն գորովալի աչքերը:

Պետրոսի տաքուկ սիրտը ինչպէ՞ս զիմանար Յիսուսի քաղցր աչքերուն այս կրկնակ արտայայտութեան: Անոնց մէջ պատկերացած վիշտը պատռեց Պետրոսի սիրտը, իսկ նկարուած սէրը յուսոյ նշոյլ մը ներշնչեց՝ անոր յուսահատ հոգւոյն: Եւ այն աղի արցունքները որ դառնապէս կը հոսէին ուրացող աշակերտին իր Փրկչին սիրովն վիրաւոր աչքերէն՝ լուացին նաեւ Յիսուսի սրտին թարմ խոցերը:

Երբոր Յիսուս տրտմած աչքով
իմ վիճակիս ալ նայեցաւ,
ինկայ Անոր ոտքը շուտով.
Ձի ամէն ինչ խաւար դարձաւ:

Սակայն երբոր աչքքս կրկին
ցառեցի ես իր սուրբ դէմքին,
Անոր սիրոյն լոյսը պայծառ
Ա՛հ, փարատեց ամէն խաւար:

Սիրայօժար եղայ գերի,
Այն վե՞ց սիրոյն զարմանալի.
Իմ յո՛յս, իմ լո՛յս, իմ կեանքս է Ան,
Հիմա ու միշտ եւ յաւիտեան:

Ն. Մ.

ԵՐԵՎԱՆԻ ՎԱՐՈՒՄԵՆԻՆ ԶԵՏ,

ՈՒ ՏԱԿԱԿԻՆ ԿՈՐՍՈՒԱԾ

Անգամ մը քարոզ մը լսեցի այս նիւթին շուրջ: Քարոզին պարունակութիւնը չեմ յիշեր, վասն զի տարիներ անցած են անոր վրայէն, սակայն բուն բնաբանը մինչեւ այսօր միտքէս ելած չէ, ու յաճախ ալ զբաղեցուցած է զիս. այսինքն Յուդա Իսկարիովտացին:

Ես կը հաւատամ թէ Յուդա այդ սոսկալի խաւարին իշխանութեանը տեղի տուաւ առանց իր քրոջներուն վախճանին վրայ լրջօրէն խորհած ըլլալու: Անոր ներսիզին խաւար էր, շօշափելի՝ խաւար: Յուդայ աստղը չէր փայլեր այլեւս, ոչ ալ արշալոյսի ամենայն տեղի ճառագայթ մը կ'երեւէր. անդառնալիօրէն դժոխքի իշխանութեան ենթարկուած էր: Թերեւս առաջին տարին փարիսեցիներուն իրեն տուած այդ չնչին գումարը, իր վարդապետը մատնելու համար, տարօրինակ եւ ծիծաղելի երեւնար, վասն զի անիկա չարագործ մը չէր, սակայն քիչ քիչ այդ խորհուրդները իր սիրտը լեցուցին. պզտիկ կայծ մը սկսաւ վառիլ անոր սրտին մէջ եւ վերջապէս բռնկեց ու տեղի տուաւ այդ վատ արարքին իրագործման: Անիկա անանկ սարսափելի գործի մը ձեռնարկեց որ իր անունը յաւիտենապէս մատնիչի զրօշմով կնքուեցաւ: Անիկա մատնեց Որդին Մարդոյ:

Կը տեսնե՞ս, պզտիկ կայծ մը մեծ հրդեհ ծագեցաւ եւ աշխարհ բոցերուն մէջ կորսուեցաւ:

Դժոխքը իր որսը ձեռք ձգած էր: Յուդայի սիրտը սկսաւ բոցերուն մէջ տանջուիլ: Մինչ նա տեսաւ Յիսուսը խաչին վրայ, կրնար զղումով գալարուիլ խաչին ոտքերուն տակ: Եթէ նոյնիսկ զինուորները մէկզի հրել անկարող զգար, եթէ Մարիամի եւ Յովնանէսի աջքերուն հանդիպելով ընկճուելու եւ ետ երթալու վտանգը կար, եթէ նոյնիսկ սրտաբեկ սրտեր մատնի՛չ, մատնի՛չ ազադակէին իրեն, բայց Յիսուս իր մահուան այն դառն տագնապներուն եւ տանջանաց մէջ պիտի ազադակէր իրեն համար, «Հայր, ներէ անոր»: Դժոխքը այլեւս իրաւունք չպիտի ունենար Յուդայի վրայ, զայն պիտի ձգէր: Բայց ոչ, հալածեց ու հալածեց զայն, յուսահատութենէ յուսահատութիւն: Խեղճ Յուդա, որ փոխանակ խաչին նայելու եւ խաչելուն դիմելու, Անոր՝ որուն սիրտը նոյն սիրով ու գուրգուրանքով լեցուն էր դեռ, գնաց եւ ինքզինքը խեղդեց: Դժոխքը մեծ յաղթանակ տարած էր Յուդայի վրայ:

Հոգի, դուն ալ մի գուցէ Յուդայի նման փոքր կայծեր ունիս սրտիդ մէջ. թերեւս նախանձ կրնայ ըլլալ այդ կայծը, թերեւս դառնութիւն, թուլութիւն եւ կամ մեղանշական խորհուրդներ եւ զգացումներ:

Զգոյշ կեցիր, վասնզի մի գուցէ այդ մէկ խորհուրդը կրնայ քեզ Փրկչէդ բաժնել: Միայն խորհուրդի փոքր կայծ մը կրնայ հրդեհ յառաջ բերել եւ քու մէջդ եղած բոլոր սէրը մաքրութիւնն ու սրբութիւնը այրել, ոչնչացնել: Կրակը, անսուրբ կրակը քեզմէ կրնայ յառաջ գալ եւ հրդեհին պատճառը դուն կրնաս ըլլալ: Դայթակղութիւններ պիտի գան, բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքովը կու գան:

Անիկա թերեւս քու ծիծաղը կը շարժէ եւ կ'ըսես ինքնիշխան, «Ես ոչ թէ երեք, այլ երեսուն տարի է որ կը քալեմ Տէրոջ հետ. ինծի ի՞նչ վտանգ կայ ինչալու»: Այո, սիրելիս, երեսուն տարի Տէրոջ հետ քալելէ ետք տակաւին կրնաս ուրանալ զայն եւ նոյն իսկ աւելի սոսկալի եւ անաւոր բան մը կրնաս ընել. Յուդա մը ըլլալ եւ քու Տէրդ մատնել:

ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ԶԱԿԱՏԱՆՈՒ ՄԷՋ

Արդ յուսոյ Աստուածը ձեզ լեցնէ բոլոր ուրախութիւնով ու խաղաղութիւնով Կառաւարտ. մէջ: Հ. Ժ. Ե. 13

Դժուար է բացատրել թէ «Ի՞նչ է հաւատալը»: Ես կը կարծեմ թէ նոյն իսկ անկարելի բան մը: Բայց երբ Յիսուս իր աննման գեղեցկութեան վերայէն քօղը կը վերցնէ եւ քեզի թոյլ կուտայ քաղցր ակնարկ մը նետել իր աննման դէմքին որ ապտակուեցաւ եւ թքուեցաւ՝ այն ատեն հոգիդ ուրախութեամբ կը փարի իրեն: Այս է հաւատալ, եւ այս է ուրախութիւնն ու խաղաղութիւնն հաւատալու մէջ: Ամենաճշմարիտ եւ ամենէն մաքուր ուրախութիւնը կը բղխի Յիսուս Քրիստոսը գտնելէն: Անիկա նը կը բղխի Յիսուսի փրկարար գտնուելէն: Անիկա պահուած գանձն է որ զայն գտնողին այնպէս ուրախութիւն կուտայ: Կը խորհի՞ս թէ այդ գանձը զբոսած ես: Ինչու որ եթէ դեռ չես գտած՝ կասկած չկայ որ աղքատ ես: Բայց որչա՛փ ուրախութիւն կրնաս ունենալ Քրիստոսի մէջ, «Յուսոյ Աստուածը ձեզ լեցնէ բոլոր ուրախութիւնով»: Պէտք չէ քաշուիս Յիսուսի տուած լեցուն ուրախութիւնը առնելու: Եթէ դուն իրապէս Քրիստոսի գաւ՝ Ենովայի սիրոյն մէջ եկած կ'ըլլաս, եւ այդ սէրը յորդարար սէր մ'է: Արարածին սէրը չի կշտացնէր սիրտը. բայց Աստուծոյ սէրը մեր հոգիներուն վրայ առատութեամբ գալով ուրախութեան լեցունութիւն կու տայ, Ա. Յովն. Ա. 4: Ան սուրբ սէր մըն է, գերիշխան սէր մը:

Արդ, հոգի, մեծ միջնորդին հետ հաշիւդ կարգադրած ես: Յիսուսի փրկարար գիտութեան տեղեկացա՞ր: Քու բոլոր հոգեբոյ հիմակուան եւ յաւիտենականութեան համար Յիսուսի տուր հաւատքով. Անոր վրայ ձգէ: Ամենէն կակուղ բարձր մեր յոգնած գլխուն համար էմանուելի կուրծքն է: «Արդ, յուսոյ Աստուածը ձեզ լեցնէ ուրախութիւնով ու խաղաղութիւնով հաւատալու մէջ»:

Ո՞Վ Է ՀԵՐՈՍ

Յայտ. Ե. 1-14

Աչքերնին վերցուցին ու մէկը չտեսան,
(Մատթ. ԺԷ. 8) բայց միայն Յիսուսը:

Ո՞Վ Է հերոս... անսանձօրէն անսանձական խօսքով՝
Դափններու, փառքի, ծափի համար կռուող մարտիկներն,
Որոնք չունին անձնաւորական ո՛ր ներքին ոյժ, ո՛ր կորով,
Ու չեն կրնար յաղթել իրենց բոլոր, մահաշունչ սեւ կիրքերն...

Ո՞Վ Է հերոս... գիշեր ցորեկ իր սեղանին անհարիր՝
Գրեով իրենց կեանքը մաշող մեծահոգակ գլուխներն,
Որ կը ցանեն լոյս, վեհ-իշխան գաղափարներ լուսավիր,
Բայց անծաղիկ կը մնայ միշտ իրենց նսեմ ապրումներն...

Ո՞Վ Է հերոս... քաղաքապետ հազարներու արցունքով՝
Ոսկին ոսկույ վրայ դիզող մեծափարթամ հարուստներն,
Որոնք յանուն իրենց փառքին մեծաշառագ փողերով՝
Հոս կ'ողորմին, հոն կը շինեն, բայց իրենք միշտ խեղճեր են...

Է՛հ, ուրեմն ո՞Վ Է հերոս, եմէ մարդիկն խօսարշաւ,
Եւ հարուստը, եւ օղաբուն, եւ քերթողը մեծփարթամ,
Հերոսներ չեն, այլ սին փառքի ծարաւ գծուծ հոգիներ,
Որ գերի են իրենց շեռքին եւ կիրքերու մահաբեր...

Ահա՛ Հերոսն, որ անվարան կ'ուրանայ փառքն իր անճառ,
Իր ծառաներն՝ սուրբ, լուսածին հրեշտակներն անբասիր,
Իր երկնային հարստութիւնն, բիրք բիրք զօրքն բոցավառ,
Այս բոլորին վրայ նսեւ կը ձգէ Հայրն սիրալիր...

Ահա՛ Հերոսն, մտորին մէջ... զոհողութիւն անսահման...
Մեր Արարիչ Աստուածն էր Ան, բայց մեզ համար մարդացաւ,
Տիեզերքի միահեծան Թագաւորն էր ինքնիշխան
Բայց մահապարտ գերիներուս ծառայ եղաւ... սէ՛ր անբաւ...

Ահա՛ Հերոսն, փողոցի խեղճ խուժանին մէջ անարտունջ,
Անվերապահ եւ անձնուրաց, դիւցազնօրէն աննկուն՝
Ինք որպէս Լոյս, որպէս Հովիւ, որպէս Մառայ անտրտունջ
Մի՛շտ կը վառի, մի՛շտ կը հովուէ, կը ծառայէ ամենուն...

Ահա՛ Հերոսն որ մարդկութեան պատիժն ուսին միւ միւսակ
Ու գիշերին ճակատն հողին կը տառապի քրտնաժոր,
Ու մեզ համար այդ աղետալ զաւնուութիւնովն անպարփակ
Լեցուած գաւաթը կը քամէ միւսեւ մրուրն ահաւոր...

Ահա՛ Հերոսն, բիրտ, ամբարիշտ ձեռքերու մէջ անստուկ,
Փռնով պսակուած, Թուքի, մուրի եւ ապտակի նշաւակ...
(Թէեւ արդար) բայց մահապարտ գառի մը պէս աննեցուկ՝
Մունջ կը կենայ որ զինք դատեն որպէս Թշուառ աւազակ...

Ահա՛ Հերոսն, կը բարձրանայ Գողգոթայի վերելքէն՝
Անէճքի փայտն ու աշխարհի անկշիռ մեղքն ուսերուն.
—Որպէս Որդի, Հօրմէն կրնայ խնդրել գունդեր հրեղէն—
Բայց մեր սիրոյն՝ կը յանձնուի զինք խաբող չար ձեռքերուն:

Ահա՛ Հերոսն, որուն ցաւոտ հոգեվարքի սուրբ պահուն՝
Երկիրն հիմքէն կը սասանի, ժայռերն ընդհուպ կը պատռին.
Հո՛ս «Ամէն բան կատարուեցաւ»... ո՛հ մեծ հրաշք անանուն
Կը ճեղքուին գերեզմաններն եւ վարս գոյրն տանարին...

Ահա՛ Հերոսն, որ իր անշուք օրօրոցէն մինչեւ մահ՝
Ասպետօրէն սիրեց, զոհեց եւ ծառայեց ու մեռաւ...
—Ինք որպէս մարդ միշտ կատարեալ, որպէս Աստ.

ուած միշտ անմահ—

Մահն ալ յաղթեց, գերեզմանին կապերն քակեց ու յարեաւ:

Ահա՛ Հերոսն, որուն վսեմ նշանաբանն էր միայն՝
Իր նախկին վեհ բարձրութենէն գահավիժուած մարդկութեան
Մեղքի մահուան եւ խաւարի լուծը կտարել անպարփակ
Որ մարդն ըլլայ իր փրկչին պէս՝ ազատ եւ սուրբ յաւիտեան:

*
* *

Արդ Թող աշխարհ ներէ ինծի որ իր անսուրբ ճակատին,
Ուրախութեան հղօր Թափով երգեմ փառքն այն Հերոսին՝
Որուն մահուան եւ կը պարտիմ փրկութիւն անվախճան,
Եւ իր վսեմ, սուրբ յարութեան՝ ազատութիւն անմահ...

Քու ետեւէդ անձնուրացման Գողգոթայի վերելքէն՝
Դիւցազնօրէն յաղթութենէ միշտ յաղթութիւն Թեւ ծող,
Բազմաթափ հերոսաց հետ ծովու ձայնով համօրէն,
Կը հոգեվեմ ո՞Վ մեծ Հերոս, «Յիսուս» անունդ առնիքնող:

Լոզան

ՍԱՄՈՒԷԼ Պ.

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՆԱԿ

ՄԻՆՁԵՒ ՎԵՐՋԸ ՀԱՒԱՏԱՐԻՄ

Ով որ մինչեւ վերջը համբերէ, անկապ պիտի ապրի:
Մատթ. ԻԴ. 13

Պապ երբ գործի սկսաւ, ամիսը 33 տօլար կը
շահէր: Երբ առաջին ամսականը իրեն տրուե-
ցաւ, անիկա 3.50 տօլարը մէկդի դրաւ, «Ասի-
կա իմ այս ամսուան հոգեւոր տուրքս է» ըսելով:
«Ամիսը 3.50 տօլար պիտի տաս», հարցուց
մէկը անոր:

«Ոչ, ասիկա եւ չեմ տար, այլ պարտք մը
կը վճարեմ, տասանորդը Տէրոջը կը պատկանի
արդէն, տասանորդ վճարելէ յետոյ կրնամ նուէր
մը ընել Ասոր» պատասխանեց Պապ:

Ժամանակէ մը վերջ Պապի ամսականը 50
տօլարի բարձրացաւ:

«Ես իմ պարտքս պիտի վճարեմ», ըսաւ ա-
նիկա:

Ամսականը 60 տօլարի բարձրացաւ եւ Պապ
հաւատարմաբար շարունակեց վճարել իր տա-
սանորդը:

Սակայն օր մը Պապ տարբեր տեսակ փոր-
ձութեան մը ենթարկուեցաւ: Շաբաթ կէսօրէ մը
ետքը վերատեսուելին օգնականը ըսաւ, «Տղաք,

դուք գիտէք թէ մենք ընդհանրապէս կիրակի օրը չենք գործեր, սակայն այս ամիս մեր գործերուն մէջ ետ ըլլալով, վաղը բոլորդ ալ գալու եւ գործելու էք որպէս զի ամիսը լրանալէ առաջ մեր գործերը կարգադրենք:»

Պապ հանդարտութեամբ պատասխանեց թէ ինք կիրակի օրը չէր կրնար գործել:

«Բայց Պապ, այս առաջին անգամն է որ Զեղմէ կիրակի օրը գործել կը պահանջեմ, մենք վաղը անպատճառ գործելու ենք որ գործերն իսլմնցնենք»:

«Շատ կը ցաւիմ, Պարոն, սակայն ատիկա իմ սկզբունքիս հակառակ է», պատասխանեց Պապ հաստատամտօրէն:

Կիրակի առաւօտ Պապէն զատ ամէնքն ալ գործի գացին: Պապ իր սովորութեան համաձայն եկեղեցի գնաց եւ երբ երկուշաբթի առաւօտուն գործի գնաց, օգնական վերատեսուէր զայն չընդունեց:

Պապ անմիջապէս ուրիշ գործ մը փնտռելու սկսաւ: Օրեր անցան ու Պապ գործ չգտաւ: Տըղաքը խորհեցան թէ անիկա ինքզինքը դժբաղդութեան մատնած էր: Սակայն պայծառ օրերը նոր պիտի գային:

Օր մը գործարանին նախագահը գործարան եկաւ Պապը անձամբ ճանչնալու նպատակաւ եւ տեսաւ որ անոր տեղը թափուր կը կենար:

«Ո՛ւր է Պապ» հարցուց նա:

«Ստիպուեցայ զայն գործէ ձգել»:

«Ի՞նչ պատճառով»:

«Կիրակի օր մը գործելու ստիպուեցանք: Պապ մերժեց մեզի գործակցիլ, եւ ես զայն գործէ ձգեցի»:

Նախագահը լռեց, սակայն անմիջապէս մարդ ղրկելով Պապը բերել տուաւ:

«Կը լսեմ թէ կիրակի օրը գործել մերժելով գործդ կորսնցուցած ես»:

«Այո, Պարոն»:

«Ես ալ ճիշդ քեզի պէս սկզբունքով տղայ մը կը փնտռէի: Դուն անմիջապէս կրնաս իմ գրասենեակիս մէջ գործի սկսիլ: Ո՛րքան ամսական կ'ընդունէիր»:

«Ամիսը 60 տօլար կ'ստանայի»:

«Իմ քովս ամիսը 75 տօլարով կ'սկսիս գործել», պատասխանեց նախագահը:

Պապ հետզհետէ բարձրացաւ, անոր ամսականը 150 տօլարի ալ հասաւ եւ տակաւին ալ կը բարձրանար:

ԱՆԳԼԻԱՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆՈՒԱՄ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Բանրերի Մահճակալէն. — Բանրերի ընտանիքին յայտնի է որ իմբադրութեան նախաձեռնութեամբ մահճակալ մը հաստատուեցաւ Հալէպի մէջ գտնուող Բեթհեադա հիւանդանոցին մէջ, ուր մեր արեւակից եւ վճարում ընելու անկարող հիւանդը կարող ըլլաւ ձրիօրէն դարմանուիլ: Այս գործը մենք շարունակեցինք մինչեւ անցեալ տարուան Դեկ. 31: Հիւանդանոցը որ մինչեւ անցեալ ամառ A. C. O. ի միջոցներով կը կառավարուէր, անցած է Dr. Monnier ի ձեռքը որ թէ անձնական միջոցներով եւ թէ բարեկամներու օգնութեամբ սոյն գործը յաւաք կը տանի:

Մենք երբ այս պարագան աչքի առջեւ ունեցանք, մտածեցինք թէ ալ ժամանակն է Բանրերի մահճակալը դադարեցնելու, երբ որ այլ եւ այլ պարագաներէ ստիպած մեր ուշադրութիւնը դէպի ֆրանսահայոց ներքին պէտքերուն դարձուցինք ու տեսանք թէ ունինք թաքստաւոր տառապողներ, որոնց եթէ ձեռք երկնցնէինք պիտի կրնայինք զանոնք ազատել մահճուան ճիւղերէն: Փորձերը մեզի ցոյց տուին թէ քանի մը ամսուան բարձր լեռներու վրայ գտնուող Սանթորիոններու կիսմըք զգալի արթնբերութիւն կ'ընէ հիւանդներու առողջական վիճակին վրայ եւ զանոնք քիչ վերջը առողջանալու եւ գործելու կարող կ'ընէ, ուստի քանի որ դարմանելի թաքստաւորները անպակաս են մեր մէջ, որոշեցինք յետ այսու ճիւղերի մահճակալի հասոյթը այդ նպատակին յատկացնել: Այսինքն ամէն անգամ հիւանդ մը Սանթորիոն ղրկել եւ անոր ծախքերը ամբողջապէս կամ մասամբ վերցնել:

Այս ամսավճարներու դիւրութեան համար արդէն քաջաբար պատրաստած ըլլալով, կրնանք ղրկել բոլոր փափաքողներուն: Ամսավճարները պիտի սկսին 1 Յունվար 1931ին Օ՛ն, ուրեմն սիրելիներ, գործի:

Մէկդի աղտոտ եւ աննպատակ պատկերները մեր տուններէն. — Երկար տարիներէ ի վեր ցաւ մեզի տեսնել նոյնիսկ քրիս. ընտանեկան յարկեր, որոնց մէջ աննպատակ, նոյնիսկ անյարմար պատկերներ կախուած են: Ոմանք ցերեւս քնաւ ուշադրուցին չորին այդ մասին եւ ինչ որ բարեկամի մը ձեռքը տեսան, քանի որ գունաւոր էր եւ պատկերի մըն ալ ձեւն ունէր, որպէս զարդարանք բերին եւ իրենց սենեակներու պատերէն կախեցին: Այսպէս անոնք ամիսներով, ցերեւս տարիներով հոն մնացին, ու ով գիտէ քանի՞ այցելուներու մտքին մէջ պղտոր խորհուրդներ արթնցոյցին: Արդ, անգամ մը դիտենք մեր սենեակներուն պատերը, եւ քրիստոնէական տան անյարմար բաները մէկդի վերցնենք: Անոնց տեղը դնենք հոգեւոր եւ Ս. գրական գեղարուեստական պատկերներ որոնք մեզի յամախ հոգեւոր խօսակցութեանց նիւթ պիտի հայլայլեն: Խմբագրութիւնս այս մասին հարկ եղած ձեռնարկներն ըրած է եւ արդէն պատրաստուած են առ այժմ չորս տեսակ պատկերներ, որոնք կըրնան զրկուիլ ամէն կողմ: ա, Բարի հովիւը, բ, Մարիամ եւ Մարիա, գ, Յիսուս հովիւն եւ ծովուն կը սաստէ, դ, Դուռը զարնող փրկիչը: Մեծուցին՝ երկ. 37, լյն. 27սմ: Գին 5 ֆր. եւ 5 ֆր. ալ կըր բարձրի ծախք, երբայիք ամենահեռաւոր տեղն իսկ անվնաս հասնելու համար: Ուստի աւելի շահաւոր կ'ըլլէ մէկը, երբ քանի մը հատ մէկէն ապագրէ, որով մէկ անգամ միայն բարգոյնի ծախքը վճարած կ'ըլլայ:

Պատրաստուելու վրայ են նաեւ երկու ամիսէն լոյս կրնան տեսնել Տասը կոյսերուն սքանչելի պատկերը, ինչպէս փետան դիմաւորող հարսը (եկեղեցին), եւ Լայն ու Նեղ ճամբուն: Բոլոր ապագրանքները կրնան խմբագրութեանս ուղղուիլ. գինները կանխաւ ղրկուելու են:

Le Gérant: Mr. le PASTEUR KALTENBACH